ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

---------- N ----------

28.03.2023թ.

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ՓՈՂՈՑԻ N 48 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պարզաբանում տրամադրելու անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի երկրորդ փուլի մեկնարկման ընթացքում հանրային ծառայողների կողմից ձեռքբերվող բնակարանի համար նախատեսվող փուլային վճարումների կիրառության ժամանակ առաջանում են տարընկալումներ: Մասնավորապես,

ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 1521-Ն որոշմամբ հաստատված կարգի 30-րդ կետի 6.1) կետի համաձայն՝ շահառուի կողմից բնակարանը հիփոթեքային վարկի հաշվին ձեռքբերելու դեպքում վերջինիս կողմից վճարումներն իրականացվում են հետևյալ փուլերով՝

1-ին փուլ՝ բնակարանի կողմնորոշիչ գնի 70 տոկոսը՝ նվազեցված բնակարանի համար արդեն իսկ վճարած կանխավճարի գումարները,

2-րդ փուլ՝ բնակարանի կողմնորոշիչ գնի 20 տոկոսը և ավտոկայանատեղիի արժեքի 80 տոկոսը:

ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 1521-Ն որոշմամբ հաստատված կարգի 30-րդ կետի 6.2) կետի համաձայն՝ շահառուի կողմից բնակարանն անձնական խնայողությունների հաշվին ձեռքբերելու դեպքում վերջինիս կողմից վճարումներն իրականացվում են հետևյալ փուլերով՝

1-ին փուլ՝ բնակարանի կողմնորոշիչ գնի 30 տոկոսը՝ նվազեցված բնակարանի համար արդեն իսկ վճարած կանխավճարի գումարը,

2-րդ փուլ՝ բնակարանի կողմնորոշիչ գնի 30 տոկոսը և ավտոկայանատեղիի արժեքի 30 տոկոսը,

3-րդ փուլ՝ բնակարանի կողմնորոշիչ գնի 20 տոկոսը և ավտոկայանատեղիի արժեքի 30 տոկոսը,

4-րդ փուլ՝ բնակարանի կողմնորոշիչ գնի և ավտոկայանատեղիի արժեքի մնացորդային գումարի չափով:

Հայտնում ենք, որ վերոնշյալ փուլերով սահմանված վճարումների առաջին փուլերում նշված՝ բնակարանի համար արդեն իսկ նախապես վճարված 10 տոկոս կանխավճարը չի ներառվում յուրաքանչյուր փուլի գումարի մեջ, այսինքն՝ առաձին փուլի համար վճարման ենթակա գումարը կազմում է այնքան տոկոս, որքան նշված է այդ փուլի համար:

Հետևաբար՝ շահառուի կողմից բնակարանը հիփոթեքային վարկի հաշվին ձեռքբերելու դեպքում վճարվում է բնակարանի կողմնորոշիչ գնի 10 տոկոսը՝ որպես կանխավճար, 1-ին փուլի կանխավճար՝ բնակարանի կողմնորոշիչ գնի 70 տոկոսը և 2-րդ փուլի կանխավճար՝ բնակարանի կողմնորոշիչ գնի 20 տոկոսը:

Ինչպես նաև շահառուի կողմից բնակարանը անձնական խնայողությունների հաշվին ձեռքբերելու դեպքում վճարվում է բնակարանի կողմնորոշիչ գնի 10 տոկոսը՝ որպես կանխավճար, 1-ին փուլի կանխավճար՝ բնակարանի կողմնորոշիչ գնի 30 տոկոսը, 2-րդ փուլի կանխավճար՝ բնակարանի կողմնորոշիչ գնի 30 տոկոսը, 3-րդ փուլի կանխավճար՝ բնակարանի կողմնորոշիչ գնի 20 տոկոսը և չորրորդ փուլ՝ բնակարանի կողմնորոշիչ գնի 10 տոկոսը: Այսպիսով, ստացվում է, որ շենքի շինարարության ավարտի հետ միաժամանակ շահառուի կողմից բնակարանի կողմնորոշիչ արժեքի 100 տոկոսի չափով վճարումները կատարված են, ինչն էլ համապատասխանում է Պետության կողմից Կառուցապատողին փոխանցվող գումարների բաշխման ցանկին՝ համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 1521-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի 6-րդ ենթակետի:

***Նախատեսվող փուլային վճարումներ՝ հիփոթեքային վարկի հաշվին**

Նախնական փուլ	I-ին փուլ	II-րդ փուլ	Ընդամենը
10%	70%	20%	100%

***Նախատեսվող փուլային վճարումներ՝ անձնական խնայողությունների հաշվին**

Նախնական փուլ	I-ին փուլ	II-րդ փուլ	III-րդ փուլ	IV-րդ փուլ	Ընդամենը
10%	30%	30%	20%	10%	100%

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ